Արձանագրություն N 4

ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-17/48 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

19 դեկտեմբերի 2017թ.
ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամներ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝ Դավիթ Գրիգորյան
քարտուղար՝ (ՄՀմ) Հայկ Խաչատրյան

Հայտերի գնահատման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հաստատված գնահատման թերթիկների արդյունքները, համաձայն որի՝

1-ին չափաբաժին - գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության, ինչպես նաև «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ու ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին գնահատել են բավարար.

2-րդ չափաբաժին - գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում արձանագրել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ամբողջական չեն ներկայացված, մասնավորապես՝

- ամբողջական չի ներկայացվել N 008-13-ZH պայմանագրի հաշիվ ապրանքագիրը.
- նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է «ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-17/48» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից.
- առաջարկված ИП212-50М2 գծային ծխի տվիչի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-17/48» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնում նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-17/48 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

2. ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-17/48 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել (ճանաչել) «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Առաջարկել «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 20.12.2017թ.-ի ժամը 17:00-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ (ԳԱՊ)՝ _____ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Աշոտ Ավետիսյան

(ԳԱ)՝ _____ Դավիթ Գրիգորյան

քարտուղար՝ (ՄՀՄ) _____ Հայկ Խաչատրյան